ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 129-Ա

ՈԳԵԼԻՑ ՈՒ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Տեղ համայնքի ավագանու 2025թ. ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի եվ վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 24-Ն որոշումը և հաշվի առնելով Տեղ համայնքի վարչական տարածքում ոգելից ու ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառք իրականացնող անհատ ձեռնարկատեր Վարդուհի Քոչարյանի 2025 թվականի հուլիսի 02-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Տեղ համայնքի Տեղ բնակավայրի Սիրան բարխուդարյան փ., թիվ 3 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Վարդուհի Քոչարյանի ներկայացրած հայտը՝ 2025 թվականի հունվարի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և

ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ 3 օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒԼՈՒՆՑ

2025թ. հուլիսի 03
գ.Տեղ